

ջրով. և չկասեցաւ նոյն դործէ, մինչև
բունոյն հետ ինքն ալ մոխիր շգար-
ձաւ:

ՆՍՏԵԼՈՒ ԿԵՐՊԻՆ ՎՐԱՅ

Ինչպէս որ պէտք է անանկ նոտիլ,
դիւրին բան կ'երևայ երիկ մարդու մը
կամ կնիկ մարդու մը, որ աղէկ առողջ
կազմուածք ունին. և սակայն որչափ
մարդ կայ որ չէ կարող ինչպէս որ պէտք
է անանկ 'ի դործ զնելու զայս: Նախա-
տես մայրերը շատ անգամ մեծ յարա-
տեսթեամբ մը կարող կ'ըլլան զայս
վերջապէս իրենց աղջկանց սորվեցընե-
լու, դիտնալով որ ոչ երբեք ախորժելի
կրնայ անցնիլ օրիորդ մը՝ որ գէշմեծցած
ըլլայ ու ծուռ թիկունքներ ունենայ:
Բայց մանչ տղայոց նկատմամբ ոչ ոք
փոյթ կ'ունենայ աղդարարութիւն ընե-
լու. որ եթէ դիտնային իրին հարկա-
ւորութիւնը՝ աւելի ուշադիր կ'ըլլային:

Ո՞վ չատեր ու չըսարսափիր այն հի-
ւանդութենէն՝ որ ծիրական ախտ կը
կոչուի: Սակայն այս հիւանդութիւնս
յանկարծակի չըգար. կամաց կամաց
անկատար արտաշընչութենէ կը սկսի,
այն ստէպ ու խորին չնշառութիւննե-
րու պակսութենէ՝ որ թոքերը գործու-
նեայ վիճակի մէջ կը պահէն: Ճամա-
նակաւ այս ետքիններս իրենց սովորա-
կան ստուարութեանը երրորդ կամ
չորրորդ մաս մը նուազ կ'ուռին. հետե-
ւաբար կուրծքը կ'ընկճի, թեւերը գէպ 'ի
առջև և դէպ 'ի ներս կը ծռին, և մարդ
վերջապէս այն բարձր ուսերը կը ժա-
ռանդէ՝ որ բժշկի մը աչքին անանկ գէշ
վախճանի մը տպաւորութիւն կ'ընեն.
Ռւստի կարելի եղածէն աւելի պէտք է
շիտակ կենալու ջանալ, վասն զի այս
դիրքս ուղղակի թշնամի է ծիւրական
ախտին, և ամեն կերպով պէտք է ջա-
նալ մարմինը այս բանիս կրթելու, թէ
մարդիկ, թէ կանայք և թէ տղայք:
Շատ շահած կ'ըլլանք՝ եթէ առանց մեր
գործոց սովորական ընթացքը շփոթե-
լու՝ կարենանք զայս գործադրել:

Չկայ տեղ մը որ աւելի յարմար ըլ-
լայ շիտակ մարմառվ քայլելու՝ ինչպէս
մեծ քաղաքի մը մէջ. վասն զի շարու-
նակ ստիպուած ենք զլուխնիս վերցը-
նելու, եթէ չենք ուզեր մերը կամ ու-
րիշներունը կոտրելու վտանգի մէջ դը-
նել:

Առանց շատ անօգուտ օրէնքներ տա-
լու, որ դիւրաւ կը մոռցուին, մասնաւոր
կերպով կը յանձնենք զլուխը վեր ըլո-
նել ջանալ, վասն զի ուսերը այն ատեն
ինքիրեննուն ուզած դիրքը կ'առնուն:
Քալած ժամանակդ գունչդ հորիզոնա-
կան զծէն քիչ մը վեր ըռնէ, և աչքդ
զլսէդ բարձր եղած բաներու վրայ շրտ-
կէ: Եթէ մէկը կ'ուզէ կերպով մը օգ-
նութիւն գտնալ այս գործողութեանս
մէջ, ձեռքերը կոնակին ետելը ըռնելու
վարժեցընէ ինքզինքը:

Ոմանք իրենց կենաց մեծ մասը նրա-
տած կ'անցունեն: Ասոնց համար մէկ
կանոն մը միայն պէտք է մեծ արժէք
մ'ունենայ. — Թող շիտակ կոնակով
աթոռներ գործածեն ինչպէս հին ա-
տեն, կամ թէ լաւ ևս այս աթոռներուն
կոնակը քիչ մը ետեր գացած ըլլայ. և
աթոռին աղէկ մը ներսը նստին, ա-
նանկ որ բոլոր ողնայարը հանգիստ
հանգչի: Զենք դիտեր թէ ինչ պատ-
ճառի համար չուզենայ պիտի մէկը 'ի
սկիզբէն տղայոց անանկ զիրքով զրել
ու կարդալ սորվեցընել, որ իրենց մար-
միոյն ստորին մասը և ուսերը միշտ
աթոռին կոնակին դպչին: — Մարդիկ
սովորաբար անանկ կը նստին որ պա-
րապ միջոց մը կը թողուն աթոռին կը-
ռակին՝ որուն վրայ ուսերը կը հանգչե-
ցընեն՝ և մարմիոյն ստորին մասին մէջ,
անանկ որ մարմինը կէս բոլորի ձեր
կ'առնու. այս նստուածքը բնականա-
պէս կ'ախորժին անոնք՝ որ թոքախտը
կը կրեն, որով ծնողք այնչափ աւելի
մեծ փոյթ պէտք է ունենան անոր զէմն
առնելու:

Չափաւոր կերակրէ մը ետքը՝ լաւ է
բացօթեայ տեղ միջակ քալուածքով մը
ժուռ գալ, ձեռքերը կոնակին ետեն ո-
գլուխը բարձր բռնած: Այսպէս կերա-

կրէն ետքը կէս ժամու քալուածքը, այն իանանց՝ որ հանգիստ կեանք մը կը վարեն, և այն մարդոց՝ որ նստողական վիճակի վարժած են, առողջութիւնը վառ կը պահէ ու կեանքը կ'երկընցընէ:

Մ. ԱՍՏԻՂԻՐՈՒ ՀՈՒԳՈՒՂՄ

ՈՂԵԲԵՐԳՈՒԹԻՒԽՆ

(Տես Երես 29:)

Հ Ա Ն Դ Է Ս

ՏԵՍԻԼ Ա.

ՊՈՊՂԻՈՍ, ՄԱՆԼԻՈՍ

ՄԱՆ. Եկեսցէ Հուեգուղոս, եկեսցէ և լիբէտականն պատգամաւոր (տե՛ս Պողլոս): Ապա թշնամիք խաղաղութեանց ցանկան:

ՊՈՊ. Եւ կամ թէ փոխանակութեան գերւոյն: Իրացն գիւտ Հուեգուղեայ յանձնէ. Եթէ և ոչ միումն լցի գամագիւտ, հարկ՝ ի վերայ կայ նորա դառնալ ՚ի կարքեգոն, և անդ իւրով արեամբ գոնսաստութեան Հուովմայ հատուցանել վրէժու: Նորա երդուեալ է զյարձն, և կանիսաւ անդէն յակն արկեալ զմեծասաստ չարչարանացն մահառիթ կազմածու: Ա՛հ, քաւ մեղ յայն դժընդակ պատուհաս զայնչափ ոք քաղաքացի....

ՄԱՆ. Լուռ լէր, զի ահա գայ:

ՏԵՍԻԼ Բ

ՀՐԵԳՈՒՂՈՍ, ՊՈՊՂԻՈՍ, ՄԱՆԼԻՈՍ, ԱՄԻԼԿԱՐ

ԱՄԻԼ. (Գաղո): Առ լինչ կաս, Հուեգուղէ. միթէ նո՞ր ինչ իցէ քեզ աեղիս:

ՀՌ. Զայն խորհիմ եթէ զինչ աստի ելի. և զինչ դառնամայսրէն:

ԱՄԻԼ. (տե՛ս Քուղանքն): Կարքեգունեանն ծերակոյտ ՚ի բաց զահաւորսն իւր ցանկացեալ ընկենուլ յանձնէն զզէնս, ովքոյն առ ծերակոյտ առաքէ Հուովմայ: Եւ թէ Հուովմա առ ՚ի նմանէ խաղաղութեան փափաքէ, և խաղաղութիւն նմա առաքէ:

ՄԱՆ. Անց բազմեաց և մանրախուղիւ ճշգրտեսցին բանք: Եւ դու, Հուեգուղէ, պյտի եկ զառաջինն քո ունել դահ:

ՀՌ. Սակայն նոք ոմանք իցեն սոքա:

ՄԱՆ. Նախարարակոյտն:

ՀՌ. Եւ դու ո՞իցես:

ՄԱՆ. Այդաք անծանօթ ես բգեշխին:

ՀՌ. Իսկ արդ ընդ նախարարան և ընդ բգետչն արկի՞ երբէք աթոռ ծառայի:

ՄԱՆ. Օ՛ն անդր. այլ Հուովմ վասն քո զիւրոց

օրինացն մուանայ խստութիւն, փոխանակ ընդ բազմահանգէս քում աշխարհակալութեամցդ: ՀՌ. Հուովմ եթէ մուանայ, ես նմին յուշ ածեմ: ՄԱՆ. (Ըստ ինձն): Պնդագոյն առաքինութիւն, ու ետես երբէք:

ՊՈՊ. (Յառանէ): Ապա և Պոպղիոս մի բազմեացի: ՀՌ. Զի գործես, Պոպղիէ:

ՊՈՊ. Զարժանն. յուն կալհասանէ ինձ ուր ոչ նստի հայրն:

ՀՌ. Ա՛հ. այսչափ ուրեմն ՚ի Հուովմ փոփոխեցան բարոյք. ՚ի գործ հասարակաց զանձին ինչ յիշատակել պարտաւ, յառաջ քան զանցանելն իմ ՚ի լիբայ, յանցանք մեծ էին:

ՊՈՊ. Սակայն . . .

ՀՌ. Բազմեաց, Պոպղիէ. և զգոյշ լէր արժանապէս ունեն զգահճ:

ՊՈՊ. Մեծարանք հօր օրէնք են ընդարդոյս:

ՀՌ. Քո մեռաւ հայր մինչդեռ ՚ի պարտութիւն մասանեցաւ:

ՄԱՆ. Արդ խօսեաց, Ամիլիար:

ԱՄԻԼ. Կարքեգուն զՀուեգուղոս ընտրեաց իւր պատգամաբեր խորհրդոց. բան՝ զոր խօսեացի գա, կարքեգուն և ես բարբառիմ:

ՄԱՆ. Հապա խօսեացի ընդ մեղ Հուեգուղոս:

ԱՄԻԼ. (Գաղո առ Հուեգ): Ցիւէա զի թէ ինչ ոչ վճարեցէն երգուար

ՀՌ. Հատուցից անթերի զերդումն իմ: (Խորհի):

ՄԱՆ. (Գաղո): Զնմանէ է բանն. ո՛հ, զինչ արդեօք խօսեացի:

ՊՈՊ. (Գաղո): Աստուածք Հուովմայ, դուք տուք բան՝ ՚ի շըթունս նորա:

ՀՌ. Կարքեգուն սիսերիմ, ո՛ ակմբահոյլ հայրապէտք, ՚ի պայման ուխտի՝ եթէ զոր այժմն ունի նմա մնասցէ՝ ՚ի խաղաղութիւն զձեղ աղերսէ: Իսկ եթէ խաղաղութիւն ընտրէք ո՞չ զիւրոյ և զձեր գերւոյն ցանկայ գոնէ փոխանակութեամբ կարձել զցաւալից նժդեհութիւն: Զերկոսեանն իսկ զընկենուլ տամ ես խորհուրդ:

ԱՄԻԼ. Զիսարդ:

ՊՈՊ. Բարեէ:

ՄԱՆ. Զարմանն մեծ:

ՀՌ. Ոչ ինչ են ինձ պէտք զնամղաղութեանն հրապարակել տոյցմ: Եթէ այդչուփի ցանկացաւ՝ ապա յահ մեծ ընթառնեալ կայ թշնամին:

ՄԱՆ. Իսկ արդ զփոխանակութիւնն:

ՀՌ. Որոդայթ զանփուուլ և դժուարաձեռն լարեալ է զնոյն:

ԱՄԻԼ. Հուեգուղէ . . .

ՀՌ. (Խորհու): Հատուցից զուխտն իմ:

ՊՈՊ. (Ըստ ինձն): Ո՛վ դիք, հայրն իմ կորնչի:

ՀՌ. Աւաշարկեալն փոխանակութիւն բիւր իմն տուգանն յինքն ծրարէ, այլ աղիսագոյն է օրինակն: Փառք և կորով քաջութեան և զինուուրական առաքինութիւն պատանդեցաւ ՚ի Հուովմայ, ով հարք, եթէ միանգամանարի վատին՝ աղատութեան և կենաց արծարծեացի յոյս: Զինչ շահ եթէ գարձից ՚ի Հուովմ՝ որ զծաւայութեանն խարազանին կամպուտակ հարուած ՚ի թիկունս առեալ բերիցէ: որ զգեւուծարաւիս արեան թըննամեաց կենդանեաւ մերկացեալ զզէնս՝ առ ահի մահուն լաւ համարեցաւ զյաղթականին յանձն առնուլ եպերանս:

ՄԱՆ. Իցէ արդեօք փոխանակութիւնդ՝ վխասա-